պատկերները
հումանիտար աջակցություն տրամադրելիս

հուշաթերթիկի մասին

ինչի՞ մասին է այս հուշաթերթիկը

այս հուշաթերթիկն առանձնացնում է այն հիմնական սկզբունքները, որոնք պետք է պահպանել հումանիտար աջակցության ընթացքում տեսա կամ լուսանկարահանումներ անելիս

ինչո՞ւ է կարեւոր այս հարցը

հումանիտար աջակցություն տրամադրելիս՝ հաճախ կազմակերպություններն ու անհատները հավաքագրում, մշակում, որեւէ եղանակով օգտագործում են մարդու անձնական տվյալներ, որոնք թույլ են տալիս ուղղակի կամ անուղղակի նույնականացնել անձի ինքնությունը (օրինակ՝ անուն, նկար, իրավիճակի նկարագիր, տարիք, այլ)

հաճախ հումանիտար աջակցություն տրամադրելիս՝ տեսա կամ լուսանկարահանվում է աջակցություն ստացող անձը, եւ տպավորություն կարող է առաջանալ, որ դա բնական գործընթաց է, կամ որ դա արվում է աջակցության տրամադրման հաշվետվողականությունն ու թափանցիկությունն ապահովելու համար.

կարեւոր է, սակայն, նկատի ունենալ, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը պահանջում է, որ՝

- ցանկացած մարդ տեղեկացված լինի տեսա կամ լուսանկարահանման մասին, ինչը ենթադրում է, որ առնվազն անձը՝

1. տեղյակ է, որ իրեն տեսա կամ լուսանկարահանում են,
2. տեղյակ է, որ իր պատկերը կարող է հայտնվել որեւէ հարթակում՝ աջակցության վերաբերյալ տեղեկություն տարածելու շրջանակներում,
3. տեղյակ է, որ տեսա կամ լուսանկարահանվելուց հրաժարվելը չի կարող պատճառ դառնալ աջակցությունից զրկվելու համար, եւ, համադրելով այդ ամենը,
- համաձայնություն է հայտնում տեսա կամ լուսանկարահանվելու մասին.

այս կանոնը վերաբերում է բոլոր դեպքերին (սոցիալական հարթակներում հրապարակումներ, այլ անձանց տվյալների փոխանցում, հանրային միջոցառումների տեսա կամ լուսանկարահանում, հաշվետվությունների կազմում, այլ), երբ որեւէ կազմակերպություն կամ անհատ հավաքում կամ մշակում է ցանկացած տեսակի անձնական տվյալներ.

պետք է նկատի ունենալ, որ բոլոր այն դեպքերում, երբ անձնական տվյալները վերաբերում են երեխային, այդ տվյալների սուբյեկտը հենց երեխան է, այլ ոչ ծնողը կամ օրինական ներկայացուցիչը՝ անկախ երեխայի տարիքից, իրավագիտակցության մակարդակից, նրա ֆիզիկական ու մտավոր զարգացվածությունից.

հարգանք

մարդու արժանապատվության հանդեպ

- մարդուն լուսանկարելիս՝ պատկերացրեք, թե ինչպիսին կլինեին ձեր զգացողությունները, եթե նրա փոխարեն նույն իրավիճակում դուք լինեիք
- հումանիտար աջակցություն ստանալիս՝ մարդն իր խոցելիությամբ առավել հակված է համաձայնել նկարվելուն՝ հաճախ վախեր ունենալով, որ լուսանկարվելու առաջարկը մերժելու դեպքում, կզրկվի տրամադրվող աջակցությունից, հետեւաբար հարկավոր է մարդուն հիշեցնել, որ լուսանկարելու առաջարկին համաձայնելը կամ մերժելը որեւէ կապ չունի տրամադրվող կամ հետագայում առաջարկվող աջակցության հետ
- կարեւոր է առանց ճնշումների, մատչելի ու հասկանալի եղանակով հարցնել մարդու ցանկությունը, բավարար ժամանակ տալ անկաշկանդ մտածելու ու որոշում կայացնելու համար
- որոշ մարդիկ իրապես չեն ցանկանում լուսանկարվել. **հարգեք նրանց որոշումը**

իրազեկ համաձայնություն

- իրազեկ համաձայնությունն ավելին է, քան ուղղակի լուսանկարվելուն համաձայն լինելը. մարդը պետք է հասկանա, թե ով է լուսանկարահանողը, ինչու է իրեն լուսանկարահանում, ինչպես է օգտագործվելու նրա լուսանկարն ու ինչ հետեւանք դա կարող է ունենալ իր համար
- մինչ լուսանկարելը՝ անհրաժեշտ է ստանալ մարդու իրազեկ համաձայնությունը
- տեղեկացրեք մարդուն, թե ինչպես կարող է իր համաձայնությունը չեղարկել՝ տրամադրելով հետադարձ կապի տվյալներ
- ստեղծեք այնպիսի միջավայր, որ համաձայնությունը չեղարկելու ցանկության դեպքում մարդը կարողանա անկաշկանդ կապ հաստատել ձեզ հետ

իրազեկվածություն

- հումանիտար աջակցություն տրամադրող անձինք պետք է իրազեկ լինեն պատասխանատու լուսանկարչության մասին, օրինակ՝ լուսանկարեն միայն անձի համաձայնությունը ստանալուց հետո, նկարի միջոցով չխոցեն անձի արժանապատվությունը, կամ չշեշտադրեն նրա խոցելիությունը, կախվածությունը տրամադրվող հումանիտար աջակցությունից, այլ
- նույն կերպ՝ հումանիտար աջակցություն տրամադրող ողջ թիմը (լուսանկարիչ, հարցազրուցավար, ուղեկցող մասնագետ, այլ) պետք է իր աշխատանքն իրականացնի տվյալների պատասխանատու կառավարման սկզբունքներին համապատասխան՝ բոլոր գործողություններում պահպանելով մարդու անձնական տվյալների, պատմությունների գաղտնիությունը

ռիսկերի գնահատում

- կատարեք ռիսկերի գնահատում. եթե ռիսկը բարձր է կամ հավանական է, որ այն կբարձրանա ժամանակի ընթացքում, մի լուսանկարահանեք անձին, իրավիճակը, իսկ եթե ավելի վաղ եք լուսանկարահանել, ապա ռիսկերի գնահատումից հետո մի օգտագործեք այդ նկարները
- մտածեք հնարավոր հետեւանքների մասին. կարո՞ղ է լուսանկարը անհարմարություններ առաջացնել անձի համար կամ կարո՞ղ է խնդիրներ առաջանալ անձի համար, եթե լուսանկարը հրապարակվի

պատասխանատու հոգատարություն

- երբեմն հնարավոր չէ գնահատել բոլոր ռիսկերը, սակայն միշտ հնարավոր է լռելյայն պաշտպանել մարդու ինքնությունը. չնկարել անձի դեմքը, նրան նույնականացնող այլ ցուցիչներ. այս կանոնը պետք է կիրառել ինչպես ճգնաժամային իրավիճակներում ու հումանիտար աջակցության ընթացքում, այնպես էլ այլ դեպքերում, օրինակ, բռնություն վերապրած մարդկանց հետ աշխատելիս

- այն, թե ինչպես է օգտագործվում նկարը նույնքան կարեւոր է, որքան նախորդող ընթացքը. պետք է օգտագործել նկարն այն սկզբնական նպատակին համապատասխան, որի համար անձը տվել էր իր իրազեկ համաձայնությունը
- եթե անձը տվել է համաձայնություն, ապա նկարելու ընթացքը եւս պետք է հարմար լինի իր համար, ինչը նշանակում է, որ, օրինակ, անընդունելի է մարդուն առաջարկել ծանր պարկը ձեռքին մնալ մի քանի րոպե մինչ փորձում եք ստանալ պատկեր...
- բառերը կարեւոր են. նկարին զուգահեռ օգտագործվող տեքստն էականորեն ազդում է դրա մեկնաբանման վրա. մարդիկ, ում նկարներն օգտագործվում են պատերազմի, բռնության եւ այլ հարցերի վերաբերյալ հրապարակումներում, ենթադրվում է, որ համանման փորձառություն ունեն, ուստի կարեւոր է չտարածել սխալ տեղեկատվություն, իսկ գրելիս էլ ընտրել այնպիսի բառեր, որոնք չեն վնասի անձին, զերծ կլինեն խտրականությունից

մասնակցայնություն

- հաճախ մարդիկ ցանկանում են պատմել իրենց պատմությունը. եթե իրավիճակը թույլատրում է, ապահովեք, որ մարդիկ իրենց մտքերով ու առաջարկներով մասնակցեն իրենց պատմությունը նկարագրելու ընթացքին
- հնարավոր է, որ շատ մարդիկ կորցրած լինեն իրենց ընտանեկան լուսանկարները. կիսվեք նրանց հետ արված նոր նկարներով

երեւակայություն

- միշտ կարելի է գտնել հնարամիտ տարբերակ այնպես լուսանկարելու, որպեսզի հնարավոր չլինի նույնականացնել մարդուն. նկարել մեջքից, պատկերել շողքը, լույսի ու ստվերի միջոցով ստանալ պատկերներ տարբեր անկյուններից
- հաճախ առանց մարդուն լուսանկարելու հնարավոր է ստանալ նրա իրավիճակը լավագույնս նկարագրող խոսուն պատկերներ

հեղինակ՝

Ստելլա Չանդիրյան

գենդերային հարցերով միջազգային եւ եվրոպական համեմատական իրավունքի մասնագետ

շապիկը եւ ձեւավորումը՝

rainbow

© 2024 Փոփոխություն

Freedom House

Փոփոխություն

հուշաթերթիկը պատրաստվել է՝
«Աջակցություն քաղաքացիական հասարակության կազմակերպություններին. հասցեագրելով Լեռնային Ղարաբաղից տեղահանված կանանց եւ աղջիկների հոգեկան առողջության ու իրավական աջակցության կարիքները» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Freedom House-ի ֆինանսական աջակցությամբ.

հուշաթերթիկում տեղ գտած դիրքորոշումներն արտահայտում են միայն Փոփոխության թիմի մոտեցումները, եւ պարտադիր չէ, որ արտահայտեն Freedom House-ի տեսակետները.

հուշաթերթիկից որեւէ հատված օգտագործելու եւ (կամ) մեջբերելու պարագայում համապատասխան հղում կատարելը պարտադիր է

մատչելի ձեւաչափով հուշաթերթիկի այլընտրանքային տարբերակները ստանալու համար կարող եք կապ հաստատել մեր թիմի հետ՝ change-armenia@protonmail.com էլեկտրոնային հասցեով

© 2024 Փոփոխություն